

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՅՐԸ

«Ապարան» մասնաճյուղի ղեկավար
Լրիվ աշխատաժամանակ
Անորոշ ժամկետով
ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Ապարան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Ապարան» մասնաճյուղի ղեկավարի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների համակարգում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում: Մասնաճյուղի աշխատողների կողմից տրամադրվող ծառայությունների որակի վերահսկողություն և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- հաճախորդների ներգրավում,
- աշխատողների աշխատանքի վերահսկողություն,
- մասնաճյուղի գործառնությունների կառավարում և վերահսկում,
- հաճախորդների կողմից բարձրացրած հարցադրումների և բողոքների կառավարում և լուծում,
- անհրաժեշտության դեպքում հաճախորդների սպասարկման գործընթացին մասնակցում,
- վարկառուների վարկունակության գնահատում,
- անհրաժեշտ վերլուծությունների իրականացում,
- ներկայացված վարկային փաթեթների ստուգում և հաստատում,
- տրամադրված վարկերի նկատմամբ հսկողության իրականացում,
- ամսական և եռամսյակային հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿՎՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթություն (տնտեսագիտական, ֆինանսական կամ բանկային),
 - ֆինանսական ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ,
 - պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
 - վերլուծելու ունակություն,
 - կազմակերպչական և ղեկավարման հմտություններ,
 - հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
 - թիմային աշխատանքի հմտություններ,
 - բիզնես-էթիկայի կանոնների իմացություն և դրանց հետևում,
 - լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:
- ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ
- Աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 60%-ը գրասենյակից դուրս անցկացնելու պատրաստակամություն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Ապարան, Մ.Բաղրամյան 47/11 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻՋԲԸ՝
ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

17 մայիսի 2018
31 մայիսի 2018